Հաստատված է
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ամբիոնի
«23» 01. 2023 թ.-ի նիստում: Արձ. № 2
Ամբիոնի պետ՝

Գ. Խուդոյան

« »----------2023 թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

/Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա/

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Վարչական իրավունք
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ ▪ **էլ հասցե**		Գ. Խուդոյան Հեռ.077441477 Email: khudoyan@edupolice.am
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		2-րդ կուրս անվճար, 3-4-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		Բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		6 (վեց)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Վարչական իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 180 ժամ, որից լսարանային 102 ժամ՝ 68 ժամ դասախոսություն, 28 սեմինար, 6 գործնական: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը չորս լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ		Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն» և «ՀՀ Սահմանադրական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ վարչական իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, մեթոդները, վարչական իրավախախտման հասկացությունը, տեսակները, տարրերն ու հատկանիշները, վարչական պատասխանատվության հատկանիշները, վարչական վարույթի հասկացությունը, սկզբունքները և փուլերը:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ վարչական իրավունքի հասկացության, առարկայի, նորմերի, համակարգի, խնդիրների, սկզբունքների, մեթոդների, վարչական իրավախախտման հասկացության, տեսակների, տարրերի, հատկանիշների, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովելու միջոցների, վարչական պատասխանա-տվության հատկանիշների, վարչական վարույթի հասկացություն, սկզբունքների և փուլերի վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել վարչական իրավունքի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները, • ուսումնասիրել վարչական իրավունքի սկզբունքները, մեթոդները, • սահմանել վարչարարության և վարչական վարույթի հասկացությունը, • բնորոշել վարչական վարույթի սկզբունքները, • ներկայացնել վարչական իրավախախտման հասկացությունն ու տեսակները, • ներկայացնել իրավախախտման իրավաբանական կազմի հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, • վեր հանել հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման իրավական հիմքերն ու հատկանիշները, • ուսումնասիրել վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Գիտենա և կարողանա՝***		1. ներկայացնել կառավարման, պետական կառավարման և սոցիալական կառավարման բովանդակությունը և հարաբերակցությունը, 2. ներկայացնել պետական կառավարման ձևերը, մեթոդները և ոլորտները, 3. սահմանել վարչական իրավունքի, որպես հանրային իրավունքի ճյուղի հասկացությունը, համակարգը, խնդիրները, նորմերը, աղբյուրները, վարչաիրավական հարաբերություն-ների կառուցվածքը և առանձնահատկությունները, 4. բացահայտել վարչական իրավունքի առարկայի բովանդակությունը, 5. սահմանել վարչական իրավունքի սուբյեկտների բնութագիրը, տեսակները, պետական ծառայողի վարչաիրավական կարգավիճակը և սուբյեկտներին բնորոշ առանձնահատկությունները, 6. բացահայտել վարչական հարկադրանքի էությունը և տեսակները, 7. ներկայացնել վարչական վարույթի սկզբունքները, 8. սահմանել հանցավորության (զանցանքների) կանխարգելման էությունը և ուղղությունները, 9. սահմանել ոստիկանության գործունեության մեջ մարդու իրավունքների պաշտպանության իրավական կառուցակարգերը, 10. կատարել ընդհանրացումներ և ճիշտ վերլություններ, 11. տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, 12. իրավաբանական ճիշտ գնահատական տալ փաստերին և արարքներին,

		13. հայտնաբերել, կանխարգելել, բացահայտել իրավախախտումները (զանցանքները), վերացնել դրանց կատարմանը նպաստող պատճառները, 14. համագործակցել գործընկերների հետ, աշխատել թիմում, վերլուծել իրավապահ մարմինների (ՀՀ ՆԳՆ ոստիկանություն, ԱԱԾ) իրավասությունը, պարզաբանել նրնաց տեղը և դերը իրավապահ համակարգում, 15. ճիշտ մեկնաբանել վարչաիրավական նորմերը, 16. ներկայացնել նորմատիվ իրավական և վարչական ակտերի իրավակիրառ նշանակությունը և առանձնահատկությունը, 17. ներկայացնել վարչական վարույթի փուլերը, վարչական ակտի տեսակն ու ձևը, վարչական ակտի առ ոչինչ և անվավեր ճանաչման հիմքերը, 18. ներկայացնել բողոքարկման և վարչական ակտի հարկադիր կատարման վարույթների առանձնահատկությունները, 19. տալ վարչական իրավախախտման հասկացությունը, վերլուծել դրա հատկանիշները, 20. բացահայտել վարչական իրավախախտման (զանցանքի) իրավաբանական կազմի (պարտադիր և ֆակուլտատիվ) տարրերի բովանդակությունը, 21. ներկայացնել վարչական իրավախախտման բազմակիությունը և դրա տեսակները, 22. ներկայացնել վարչական պատասխանատվության և պատժի տարբերությունները, 23. սահմանել վարչական պատասխանատվության հասկացությունը, այն բացառող հանգամանքները և ազատելու հիմքերը, 24. սահմանել վարչական տույժի հասկացությունը, նպատակը և տեսակները, 25. ներկայացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի բնութագիրը և դրա առանձնահատկությունները, 26. ներկայացնել վարչական վարույթի ընթացքում ապացույցների և ապացուցման գործընթացի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, 27. ներկայացնել հանցագործությունների և վարչական իրավախախտումների բովանդակային տարբերությունը և դրանց սահմանազատման հիմքերը, 28. կատարել գործնական առաջադրանքներ, կազմել փաստաթղթեր, լուծել խնդիրներ կամ թեստեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 1995թ. /փոփոխ. 2015թ./: 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք 1985թ., ՀՍՍՀԳՍ 1985/23: 3. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենք 18.02.2004թ: ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413: 4. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013թ: ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1: 5. Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 21.03.2018թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):

		6. Գ.Դանիելյան «Վարչական պատասխանատվություն»: Ուսումնական ձեռնարկ /Երևան: «Լույս» հրատարակչություն, 2002թ.-280 էջ/: 7. Գ.Դանիելյան «Վարչական վարույթ և դատավարություն»: Ուսումնական ձեռնարկ / Երևան: Տիգրան Մեծ, 2011թ. -384 էջ: 8. Գ.Իսրայելյան «ՀՀ վարչական իրավունք»: Դասախոսությունների և խնդիրների ժողովածու: /Երևան Աստղիկ գրատուն 2015թ. -147 էջ/: 9. Գ.Իսրայելյան «ՀՀ վարչական իրավունք»: Ուսումնական ձեռնարկ: /Երևան Աստղիկ գրատուն 2018թ. – Մաս 1 - 159 էջ, Մաս 2 - 155 էջ/: 10. «ՀՀ վարչական իրավունք»: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. - Երևանի պետ. համալս. - Երևանի պետական համալս. հրատ., 2019, 368 էջ:
Լրացուցիչ		1. Հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 23.03.2018թ., ՀՀՊՏ 2018.03.29/24(1382): 2. Ոստիկանության մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 16.04.2001թ., ՀՕ-177: 3. Ազգային անվտանգության մարմինների մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 28.12.2001թ., ՀՀՊՏ 2002.02.55/6/181/: 4. Արհեստակցական միությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 05.12.2000թ., ՀՀՊՏ 2001.01.15/1/133/: 5. Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 03.04.2001թ., ՀՀՊՏ 2002.07.03./23/198/: 6. Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 30.05.2001թ., ՀՀՊՏ 2001.08.08./26/158/: 7. Ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական և այլ ակտեր: 8. Административная ответственность: учеб. Пособие для студентов вузов, обучающихся по специальности «Юриспруденция» /А.И.Стахов и др; под ред. И.Ш.Килясханова, А.И.Стахова -3-е изд., перераб. И доп. – М.:ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2008г. -144 էջ: 9. Барах Д.Н., Ренов Э.Н. Производство по делам об административных правонарушениях /Пособие для слушателей народных унижерситетов/ -М.: Знание, 1989г.-96 էջ: 10. Парыгин Н.П., Головко В.В. Исполнение административних наказаний: Учеббное пособие –М.: Изд.-во Эксмо, 2006г. 128 էջ: 11. Сорокин В.Д. Административно- процессуальное право: Учебник 2-е изд., перераб. И доп. /Подгот.докт.юрид.наук, проф. А.И.Каплуновым –СПБ.: Издательство Р.Асланова «Юридический центр Пресс», 2008г.-571 էջ: 12. Курс по Административному праву: учеб. пособие / В. В. Баталина – 3-е издание «Окей-книга» 187 с.: 13. Административное право в схемах и таблицах: учеб. пособие / Н. Г. Деменкова, М. С. Игнатова, И. Ю. Стариков. – Москва: Проспект, 2018. – 112 с.:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգում /ստուգված, չստուգված/, միջանկյալ և ամփոփիչ քննություններ /գերազանց, լավ, բավարար, անբավարար/

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է ունենալ մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված» գնահատականով: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանք կատարելիս արգելվում է գրագողությունը: Այլ հեղինակների աշխատություններից օգտվելիս սովորողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **«Պետական կառավարման բնութագիրը»** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կառավարման հասկացությունը: Սոցիալական կառավարման հասկացությունը, տեսակները: 2. Պետական կառավարման հասկացությունը, բնորոշ գծերը, պետական կառավարման փուլերը: 3. Գործադիր իշխանության հասկացությունը, գործադիր իշխանության և պետական կառավարման փոխհարաբերությունը: 4.Պետական կառավարման գործառույթները: Հիմնական և օժանդակ գործառույթներ: 5.Պետական կառավարման սկզբունքները:	Հարցեր 1-5 – Ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը և առանձնացնում այն առարկաները, որոնք վերաբերվում են պետական կառավարման ոլորտին: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են պետական կառավարման հասկացությունը, տեսակները, գործառույթները և սկզբունքները, քննարկում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 2 **«Վարչական իրավունքը հանրային իրավունքի համակարգում»** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. «Վարչական իրավունքը» որպես հանրային իրավունքի ճյուղ: 2. Վարչական իրավունքի կարգավորման առարկան: 3. Վարչաիրավական հարաբերություն: 4. Վարչական իրավունքի կարգավորման մեթոդները: 5. Վարչական իրավունքի համակարգը: 6.Վարչական իրավունքի կապն իրավունքի այլ ճյուղերի հետ: 7. Վարչական իրավունքի գիտությունը:	Հարցեր 1-7 - ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար և պատրաստվում են սեմինար պարապմունքի: Հարցեր 1-7 – ինքնուրույն աշխատանք սովորողները առանձնացնում են վարչական իրավունքի կարգավորման մեթոդները, ուսումնասիրում վարչական իրավունքի կապը պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, ֆինանսական իրավունքի, քրեական իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի հետ: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչական իրավունքի հասկացությունը, կարգավորման

	առարկան, կարգավորման առարկայի մեջ մտնող պետական կառավարման ոլորտի իրավահարաբերությունները, կարգավորման մեթոդի հասկացությունը, վարչական իրավունքի համակարգի ընդհանուր մասի բաժինները, և հատոկ մասը, ներկայացնում վարչական իրավունքի կապը իրավունքի այլ ճյուղերի հետ: Ներկայացնում են նաև վարչական իրավունքի գիտությունը բնութագրող տեղեկություններ:

Թեմա 3 **«Վարչական իրավունքի նորմերը և աղբյուրները»** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավունքի աղբյուրները: 2. Վարչական իրավունքի նորմի հասկացությունը և գործառույթները: 3.Վարչական իրավունքի նորմի կառուցվածքը: 4.Վարչական իրավունքի նորմերի դասակարգումը: 5. Վարչական իրավունքի նորմերի իրագործման հասկացությունը և եղանակները:	Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրա-հարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. դասախոսին ներկայացնում են վարչաիրավական նորմերի կառոցվածքային առանձնահատկությունների հետ կապված վիճահարույց հարցեր և արտահայտում իրենց տեսակետներն ու մոտեցումները դրանց վերաբերյալ: Հարցեր 1-5 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչաիրավական նորմերի հասկացությունը, աղբյուրները, բնորոշ գծերը, դրանց կառոցվածքը, դասակարգումը ըստ իրավաբանական բովանդակության, արտահայտման ձևի, ժամկետի, ընդունող մարմնի իրավասությունների բնույթի և գործողության տարածքի: Վարչաիրավական նորմերի իրացման եղանակները:

Թեմա 4 **«Պետական կառավարման ձևերը և մեթոդները»** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Պետական կառավարման ձևի հասկացությունը: 2. Պետական կառավարման մեթոդի հասկացությունը: Մեթոդների տեսակները: 3. Վարչական պայմանագիր: 4. Համոզումը և հարկադրանքը պետական կառավարման բնագավառում:	Հարցեր 1-5 ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ քննարկվում են

5. Կառավարչական ակտի հասկացությունը և բնորոշ գծերը: Կառավարչական ակտին ներկայացվող պահանջները:	խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: 1-5 – սեմինար պարապմունք, կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցնման միջոցով:

Թեմա 5 **«Վարչական իրավունքի սուբյեկտները»** **(8 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավունքի սուբյեկտի բնութագիրը և տեսակները: 2. Վարչական իրավունքի մասնավոր և հանրային սուբյեկտները: 3. Ֆիզիկական անձինք որպես վարչական իրավունքի սուբյեկտներ: ՀՀ քաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը: Երկքաղաքացիների վարչաիրավական կարգավիճակը: Օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վարչաիրավական կարգավիճակը: 4. Պետական ծառայողի վարչաիրավական կարգավիճակը: 5.Վարչական իրավունքի կոլեկտիվ սուբյեկտները: Հասարակական միավորումների քաղաքական կազմակերպությունների վարչաիրավական կարգավիճակը: 6. Գործադիր իշխանության մարմինները որպես վարչական իրավունքի սուբյեկտներ: Գործադիր իշխանության բնութագիրը: Գործադիր իշխանության և պետական կառավարման հարաբերակցությունը: ՀՀ կառավարության ձևավորման կարգը, կառուցվածքը և լիազորությունները: Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնելը: Հանրապետական գործադիր մարմիններ:	Հարցեր 1-6 ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում քննարկումներ վարչական իրավունքի սուբյեկտի և վարչաիրավական հարաբերությունների սուբյեկտի սահմանզատման հարցի շուրջ: Հարցեր 1-6 անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վարչական իրավունքի սուբյեկտների հասկացությունը, անհատական և կոլեկտիվ սուբյեկտների իրավունակությունը և գործունակությունը, անհատական և կոլեկտիվ սուբյեկտների տեսակները և կարգավիճակը:

Թեմա 6 **Հատուկ վարչաիրավական ռեժիմներ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հատուկ վարչաիրավական ռեժիմների հասկացությունը, իրավական հիմքերը և տեսակները 2. Արտակարգ դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները: 3. Ռազմական դրության պետական կառավարման վարչաիրավական կարգավորման առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրներին սովորողները ներկայացնում են արձագանքման հնարավոր վարչաիրավական լուծումները:

Թեմա 7 **«Պետական կառավարման ոլորտների ընդհանուր բնութագիրը»**

(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)	
1.Պետական կառավարման ոլորտները՝ ֆինանսական, տնտեսական, սոցիալ-մշակութային և այլ հարակից: 2.Պետական կառավարումը վարչաքաղաքական ոլորտում: 3. ՀՀ ՆԳՆ և վարչապետին ենթական ԱԱԾ-ն:	Հարցեր 1-3 - ներկայացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ յուրացնում մատուցված նյութը: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք, Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցման միջոցով:

Թեմա 8 «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ» (10 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)	
1. Վարչարարության բնութագիրը: Վարչական վարույթը որպես իրավաբանական վարույթի տեսակ: 2. Վարչական վարույթի և վարչարարության հասկացությունը և փոխհարաբերությունը: 3. Վարչական վարույթի և վարչարարության իրավական հիմքերը: 4. Վարչական վարույթի և վարչարարության հիմնարար սկզբունքները: 5. Վարչարարության ձևերը: 6. Վարչարարության մեթոդները: Տնտեսական և վարչական մեթոդներ: 7. Վարչարարության օրինականության ապահովումը: 8. Գործերի ենթակայությունը, վարչական մարմինների փոխօգնությունը: 9. Վարչական վարույթի ժամկետները, մասնակիցները, բացարկի /ինքնաբացարկի/ և կասեցման ու կարճման հիմքերը: 10. Վարչական վարույթի փուլերը: 11. Վարչական ակտը: Վարչական ակտի տեսակները և ձևերը: 12. Առ ոչինչ վարչական ակտը, վարչական ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները: 13. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը, վարչական վարույթում արձանագրություն կազմելը: 14. Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը, պատասխանատվության հիմքերը և կարգը: 15. Վնասի հատուցման եղանակները և չափերը: 16. Բողոքարկման վարույթը: 17. Վարչական ակտի հարկադիր կատարումը: 18. Վարչական ծախսերը:	Հարցեր 1-18 - ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-18 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-18 - անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 9 «Կարգապահական վարույթը հանրային ծառայության ոլորտում» (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	

1. Հանրային ծառայության ոլորտում կարգապահական վարույթի առանձնահատկությունները և իրավական հիմքերը: 2. Կարգապահական խախտում (զանցանք): 3. Կարգապահական տույժի հասկացությունը և տեսակները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 10 **«Վարչական հարկադրանքի էությունը և տեսակները»** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
1.Վարչական հարկադրանքի հասկացությունը, հատկանիշները և տեսակները: 2.Վարչական նախականխիչ միջոցների բնութագիրը և տեսակները: 3. Վարչական խափանիչ միջոցների բնութագիրը և տեսակները:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 11 **«Վարչական իրավախախտում»** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
1. Վարչական իրավախախտման հասկացությունը և հատկանիշները: 2. Վարչական իրավախախտման իրավաբանական կազմը: Զանցանքի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: 3. Վարչական իրավախախտման օբյեկտը և օբյեկտիվ կողմը: 4. Վարչական իրավախախտման սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: 5. Վարչական իրավախախտումների բազմակիությունը և տեսակները:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1-5 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ:

Թեմա 12 **«Վարչական պատասխանատվություն»** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Վարչական պատասխանատվությունը որպես իրավաբանական պատասխանատվության ինքնուրույն տեսակ: Հասկացությունը և հատկանիշները: 2.Վարչական պատասխանատվության հարաբերակցությունն իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների հետ: 3. Վարչական պատասխանատվության նորմատիվ, փաստական և ընթացակարգային հիմքերը:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-8 – ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար

4. Առանձին սուբյեկտների վարչական պատասխանատվության առանձնահատկությունները: 5. Վարչական պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները: 6. Վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները: 7. Վարչական պատասխանատվությունից ազատելը: 8. Վարչական տույժեր:	պարապմունքի և հաջորդ դասախոսության ժամանակ: Հարցեր 1-8 – սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարցեր 5-8 - գործնական պարապմունք: Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները հիմնավորում են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակներից բխող վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները: Սովորողները տարբերակում են զանցանքի և հանցանքի իրաբանական կազմերը, համապատասխան հիմնավորմամբ:

Թեմա 13 **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթ»** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը: 2. Վարչական իրավախախտմների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքները: Ապացույցների տեսակները: 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթին մասնակցող անձինք: 4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովող միջոցները: Վարչական ձերբակալում, զննություն, իրերի և փաստաթղթերի վերցնելը: 5. Անձի բերումը: Բերման կարգը, հիմքերը, ժամկետները: 6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը, որոշում ընդունելը, այն բողոքարկելը և կատարելը: 7. Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները:	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 1- 7 – ինքնուրույն աշխատանք: ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, Հարցեր 4-7 գործնական պարապմունք: Դասախոսի կողմից ներկայացված իրավիճակային խնդիրների հիման վրա սովորողները կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ ուսումնական գործ՝ օրտագործելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթն ապահովող միջոցներ նախատեսող կարգավորումները: Սովորողների կողմից գործնական աշխատանքի շրջանակներում կազմվում են արձանագրություններ:

Թեմա 14 **Հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը:** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**

1.Հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման նշանակությունը: 2.Բնակչության առողջության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 3.Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 4.Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և տրանսպորտային միջոցների շահագործման ոլորտում կատարվող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը: 5.Կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը 6.Շրջակա միջավայրի պահպանության դեմ ոտնձգող հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատումը:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը: Հարցեր 2-6 գործնական պարապմունք: Դասախոսի կողմից տրված իրավիճակային խնդիրների լուծմամբ սովորողները տարբերակում են վարչական իրավախախտման և հանցագործության իրավաբանական կազմերը (հանցակազմ, զանցակազմ), հիմնավորում իրենց դիրքորոշումը: